ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱԻ

ՏՐԻՔՍՏԵՐԻ ԱՐԽԵՏԻՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, արխետիպերը ստեղծում, խթանում եւ կարգավորում են ամբողջ մշակույթն ու մարդկային կենսաձեւերը[1]: Արխետիպը չի «ճանաչում» ո՛չ տարածք, ո՛չ ժամանակ, ո՛չ էլ պատճառահետեւանքային տրամաբանություն, սակայն այն մարմնավորվում է էթնիկ մշակույթներին բնորոշ ձեւերում: Տրիքստերի կերպարը հանդես է գալիս նաեւ հայկական մշակույթի մի շարք բնագավառներում՝ առասպել, ծես, բանահյուսություն, կենցաղ, գրականություն եւ այլն:

Տրիքստերը որպես արխետիպ. Անկախ ժամանակակից քաղաքակրթության գերռացիոնալ դիրքորոշումից՝ մարդիկ այսօր, ինչպես եւ բոլոր ժամանակներում, հակված են հուզականության: Տրիքստերը՝ իբրեւ արխետիպային կերպար, ունի բազմաթիվ դրսեւորումներ. նա բազմակողմանի է, ի հայտ է գալիս հակադիր ձեւերում, դրանով իսկ միանշանակ չէ: Կ. Գ. Յունգից հետո տրիքստերի կերպարով զբաղվել են տարբեր բնագավառների մի շարք մասնագետներ, որոնք առանձնացրել են տրիքստերին բնորոշ հատկանիշները[2]: Դրանցից առավել նշանակալիցներն են՝ անշահախնդիր խաղացող, հեղափոխական-ստեղծագործող (արարիչ, մշակութային հերոս, ընդունված կանոններին հակադրվող եւ նորերը ներդնող), խաբեբա (աճպարար, որտեղից է անունը՝ անգլ. trickster), խելառ (խելագար, խեղկատակ, նորմերը խախտող, անգամ հակահասարակական վարքի տեր), զոհ: Պակաս հատկանշական են, սակայն վերոհիշյալ հատկությունների հետ են հաճախ հանդես գալիս հետեւյալ որակները՝ գող, շա-

---

[1] **C.-G. Jung**, Theoretische Überlegungen zum Wesen des Psychischen, Grundwerke, Bd. 2, Olten und Freiburg, 1990, S. 69 (գերմաներենից թարգմանության համար խորին շնորհակալություն ենք հայտնում Լ. Սիմոնյանին):

[2] Այդ աշխատությունների քննարկումը կարելի է գտնել՝ **Լ. Աբրահամյան**, Տրիքստեր՝ հայտնի եւ անհայտ, Հայ ժողովրդական մշակույթ, XIV, Երեւան, 2007, էջ 5-9:

տակեր, արտաքնապես տգեղ, խեղանդամ: Այս հատկանիշներից շատերը կարող են բնորոշ լինել վառ արտահայտված տրիքստեր-պերսոնաժներին, մինչդեռ անշահախնդիր խաղը, հակադրությունը գործող կարգ ու կանոնին, ի վերջո, զոհ գնալը տրիքստերի համար պարտադիր գծեր են:

Տրիքստերի գործողությունները, որպես արարչագործության նմանակում, հաճախ լինում են զվարճալի եւ նույնիսկ զավեշտական: Թեեւ նա ո՛չ չար է, ո՛չ բարի, սակայն սարսափելի դաժանություն է ցուցաբերում իր անգիտակից լինելու եւ լքվածության պատճառով: Տրիքստերը արխաիկ-նախնադարյան «տիեզերական» էակ է, որը գերազանցում է հասարակ մարդուն իր գերբնական հատկություններով, սակայն, մյուս կողմից՝ զիջում է մարդուն իր «անխելքության» եւ տարերայնության պատճառով, քանի որ նրա մեջ մարմնավորված է պայմանականություններից անդին անգիտակցականը: Տրիքստերը հավասար չէ կենդանուն, քանի որ չափազանց անօգնական է. նա չունի ինքնապահպանման բնազդ: Տրիքստերն ունի շրջապատին չհամակերպվող էություն, հակահասարակական էակ է, փոխարենը ավելի միտված է զարգացմանը՝ շնորհիվ հետաքրքրասիրության, գիտելիքների հանդեպ անհաղթահարելի ձգտման, որը միշտ ընդգծվում է առասպելներում[3]*:*

Տրիքստերները լինում են գերբնական էակներ, կենդանիներ կամ մարդիկ, երբեմն՝ երեքը միասին: Դրանից կախված՝ նրանք կարող են լինել իսկական արարիչներ կամ ծաղրանմանակողներ, կարող են մեռնել կամ ուղղակի պատժվել, լինել հզոր կամ թույլ:

Տրիքստերը հաճախ տարօրինակ մարդ է, խեղկատակ. նրան բոլորը հիմար են համարում, որի պատճառով նա ժամանակավորապես վայելում է անպատժելիությունը: Միաժամանակ նա իրականացնում է կապը վերին աշխարհի հետ եւ մասնակցում արարման գործընթացին[4]*: Նա գերմարդ է. նրանից վախենում են եւ խուսափում, ընկերները լքում են նրան*[5]*: Հանճարի շնորհիվ նրան միաժամանակ թույլատրվում է այն, ինչն արգելված է մյուսներին, մինչեւ գալիս է նրան զոհաբերելու ժամանակը:*

Տրիքստերի դերում կարող է հանդես գալ հին սերնդի աստվածությունը կամ աստվածությանը նմանակող էակը: Ըստ հայկական ավանդազրույցի՝ սատանան նախանձում է Աստծուն եւ ցանկանում է ինքն էլ արարել: Նա սովորեցնում է մարդկանց, բույսերին, կենդանիներին

---

[3] **Կ. Գ. Юнг**, Психология образа трикстера, К. Г. Юнг, Душа и миф: шесть архетипов, Киев, 1996, с. 347-348.

[4] **Լ. Սիմոնյան**, Արխետիպ. նոր հայացք հին տեսությանը, Երեւան, 1998, էջ 6:

[5] **Կ. Գ. Юнг**, նշվ. աշխ., էջ 347:

ու քարերին՝ ինչպես կրակ ստանալ: Աստված զայրանալով ստեղծում է երկնային կրակը՝ կայծակը, որի հարվածից մարդիկ մեռնում են, իսկ սատանան փախչում է[6]: Այս առասպելում սատանան գործում է Պրոմեթեւսի նման, որը մարդկանց կրակ է պարգեւում: Պրոմեթեւսը եւս վառ արտահայտված տրիքստեր է[7]:

Հաճախ տրիքստերը գաճաճ է, կաղ, երբեմն՝ կույր, նաեւ խթոնիկ էակ է: Ասացվածքը վկայում է՝ «Ինչքան գետնի երեսին է, յոթ այդքան գետնի տակ է», այսինքն՝ գաճաճը սովորականից ցածրահասակ է, եւ դա ընկալվում է որպես խորամանկ, վտանգավոր լինելու նշան:

Տրիքստերի արխետիպը երբեմն այնքան ցայտուն է արտահայտվում, որ կերպարը, չլինելով տրիքստեր, շրջապատի կողմից, այնուամենայնիվ, ընկալվում է որպես այդպիսին: Կարելի է հիշել Քաջ Նազարին՝ ստախոս, պարծենկոտ ու վախկոտ, տիպիկ դիմակահանդեսային կերպար, որը բախտի բերմամբ դառնում է թագավոր: Հասարակությունը նրան վերագրում է տրիքստերի հատկություններ եւ հասցնում փառքի գագաթնակետին[8]: Նույն կերպ տրիքստերի որակներ են վերագրում Ե. Օտյանի «Կեղծ լրտեսը» պատմվածքի հերոսին՝ «մյուսյու Ժաքին»: Որտեղ որ նա հայտնվում էր, բոլորը կարծում էին, թե ծպտյալ լրտես է՝ խաբում է, որ իմանա իրենց գաղտնիքները: «Մյուսյու Ժաքը» սկսում է օգտվել այդ հանգամանքից[9]:

Տրիքստերը հայկական տոնածիսական համակարգում. Տրիքստերը ժողովրդի կողմից ամենասիրված արխետիպային կերպարներից է, ինչն արտահայտված է հայկական տոներում: Այսպես նա բարեկենդանյան ամենակարեւոր կերպարն է: Շահը, Խանը, Փաշան, Էշ-պարոնը ավանակին նստած արքան է, որը միաժամանակ տրիքստեր-խեղկատակ եւ ծիսական հարկահավաք է: Նա դատում է, մահացած ձեւանում, ազատ ու սանձարձակ է պահում իրեն, նրան ծեծում եւ ծանակում են: Ի վերջո, Խանին զոհաբերում են. նրան նետում են ջուրը, այրում գլխարկը եւ այլն[10]: Փաշային զոհաբերում էին ագռավ, որը, ըստ Լ. Սիմոնյանի, նրա երկվորյակ-խորհրդանիշն էր[11], մինչդեռ մի շարք ժողովուրդների (օր.՝ Սիբիրի եւ

---

[6] **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, Երեւան, 1969, թ. 905, էջ 410-411:
[7] **Р. Грейвс**, Мифы древней Греции, Москва, 1992, с. 106-107.
[8] «Ինչ քաջություն, ինչ խելք, ինչ հանճար. դատարկ բաներ են բոլորը. բանը մարդուս բախտն է». **Հ. Թումանյան**, Քաջ Նազարը, Երկերի ժողովածու, հ. 3, Երեւան, 1969:
[9] **Ե. Օտյան**, Կեղծ լրտեսը, Ընտիր երկեր, Երեւան, 1988:
[10] **Լ. Սիմոնյան**, Տոմարային ծիսաշար, հ. 2, Երեւան, 2007, էջ 88, 90:
[11] Անդ, էջ 91:

Հյուսիսային Ամերիկայի բնիկների) առասպելաբանության մեջ ագռավը ինքը տրիքստեր-հերոս է[12]*:*

Հայերի մեջ Բարեկենդանի փաշայից[13] *բացի, կային նաեւ այլ՝ կես մարդ-կես կենդանի ծիսական տրիքստերներ: Այսպիսին էր Բայազետի Քյոսա կելինը, որին կանդրադառնանք ստորեւ: Այսպիսին է նաեւ Բաղեշի քոշիկը (այծիկը), որին խաղացնում էին Մեծ Պահքի առաջին օրը. «...տղայի մ'ետեւի ու առջեւի կողմէն մորթ կը կախեն, երեսը կ'ալրեն, գլուխը կը կապկպեն ու մէջքէն թուր մը ու թեւէն անեղ մը կը ձգեն. այս խրտուիլակին «քօշիկ» կ'ըսեն. թաղի բոլոր տները կը պտըտին ու կը խաղան քօշիկն ու իր ընկերները: Ամէն մի կատակախաղի մէջ քօշիկն կը մեռնի ու կը յառնէ...»*[14]*:*

Տրիքստերը հայ առասպելաբանության մեջ. Այս համատեքստում շատ կարեւոր է Անանիա Շիրակացու հաղորդածը Վահագնի մասին. «...ոմանք յառաջնորդացն Հայոց ասացին՝ թէ խիստ ճմերանի Վահագն՝ նախնին Հայոց՝ գողացաւ զյարդն Բաղասամայ (Բարշամի՝ Կ. Հ.) Ասորւոց նախնոյն. զոր եւ մեք սովորեցաք բնախօսութեամբ Յարդագողի հետ անուանել»[15]*: Այսպես է բացատրվում Ծիր կաթինի հայկական անվանումը՝ Հարդագողի ճանապարհ: Վահագնը՝ իբրեւ հայոց նախնի եւ գողության միջոցով տիեզերք գոյացնող*[16]*, կարող է ընկալվել որպես արարիչ: Համաձայն հայտնի առասպել-երգի՝ նա կապում է երեք աշխարհները՝ երկինքը, երկիրը եւ ծովը: Ինչպես նշեցինք՝ տրիքստերը միջնորդ է (ըստ Կ. Լեւի-Ստրոսի՝ «մեդիատոր»), կապակցող, ինչպես եւ գող: Վահագնը նաեւ աստվածամարտիկ է, քանի որ գողանում է Բարշամի, Բաալ-Շամեմի (աքքադ.՝ «երկնքի տիրակալ») հարդը: Սակայն չկան տվյալներ նրա զոհաբերության մասին: Կարելի է ենթադրել, որ Վահագնը տրիքստեր է մասամբ, ինչպես առհասարակ անմահները՝ դիցուլթները:*

---

[12] **Е. Мелетинский**, Ворон, "Мифологический словарь", Москва, 1991, с. 130.

[13] **Վ. վրդ. Տէր-Մինասեան**, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, Կ. Պոլիս, 1904, էջ 68-71:

[14] «Գաւառական սովորոյթք, Խուլթիկ գիւղ, Տարեկան սովորութիւններ», «Մասիս», Կ. Պոլիս, 1885, էջ 1020:

[15] «Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից», Ս. Պետերբուրգ, 1877, էջ 48:

[16] Հայտնի է, որ հայոց մեջ մինչ օրս կենդանի են Հարդագողի ճանապարհի կամ Սանամոր իզի մասին բազմապիսի ավանդազրույցներ: Դրանց դիտարկումը դուրս է տրիքստերի թեմայի սահմաններից, քանզի դրանք հաճախ ստանում են կանոնի, արգելքի խախտման բարոյագիտական մեկնաբանություն, իսկ գող-հերոսը չունի տրիքստերին հատուկ որակներ:

Հարդի գողության մասին, այս անգամ հայոց Տրդատ Գ. թագավորի կողմից, ուշագրավ հիշատակություն ունի Ագաթանգեղոսը: Գոթերի դեմ պատերազմելու համար Տրդատ արքան իր եւ հունական զորքերով գնում է Հունաց կայսեր մոտ: Նրանք կեսգիշերին հասնում են մի քաղաքի դարպասներին: Ձիերի համար չոր խոտ (դարման) չկար, իսկ պարսպից ներս խոտի դեզեր էին դրված: Տրդատը անցնում է պարսպի վրայով եւ խոտի դեզերը նետում զորքի կողմը: Հետագայում նա դառնում է կայսեր փոխանորդ, մարտնչում եւ հաղթում է գոթերի թագավորին[17]*: Հարդագող Վահագնի եւ հարդագող Տրդատի զուգահեռը հուշում է, որ Վահագնի եղբայր Տիրանի ու Տրդատի անունների նմանությունը, թերեւս, պատահական չէ: Հարդագողը դիտվում է միաժամանակ որպես գերբնական հատկություններով օժտված էակ:*

Առասպելներում եւ կենդանական հեքիաթներում հաճախ են հանդիպում կենդանի-տրիքստերները՝ ագռավ, կատու, կոյոտ եւ այլն: Սովորաբար նման կենդանիները տրիքստերի կերպարի մարմնավորման համար ընտրվում են իրենց բնական հատկությունների շնորհիվ. կատուն խաղասեր է, ագռավը՝ «չարաճճի», այլ կենդանիներին եւ նույնիսկ մարդկանց խաբող: Կատուն, աղվեսն ու ագռավը նաեւ հմուտ գողեր են: Այս կենդանիներին միավորում է եւս մեկ հատկություն՝ ոչ խոտակեր են, ոչ գիշատիչ: Միջանկյալ դիրք գրավելով՝ ընկալվում են որպես «մեդիատորներ», այսինքն՝ ունեն տրիքստերին հատուկ միջնորդի որակ, հակասականություն, որն ունի հաղթահարման կարիք[18]*: Ըստ Կ. Լեւի-Ստրոսի՝ հաղթահարման նպատակը երկվությունից ամբողջության հասնելն է*[19]*:*

Հայերի, ինչպես եւ շատ այլ ժողովուրդների մեջ, աղվեսը ժողովրդական հեքիաթների, կատակերգերի սիրելի կերպարներից է: Նա կարեւոր դեր է խաղում նաեւ հարսանյաց ծեսում: Բոլոր տեսակի արգելքները հաղթահարելով, ծեծի ենթարկվելով ու տուգանք վճարելով՝ նա հասնում է փեսայի տուն եւ, որպես բարի սուրհանդակ, հայտնում է հարսի ու հարսանեկան թափորի ճանապարհ ընկնելը[20]*:*

Հարսանեկան սովորույթի զուգահեռն է «Աղվեսը, Գելը, Արջը եւ Ձմրուխ-ղուշը» հեքիաթը[21]*: Թագավորի տղան գնում-դառնում է ավչի՝*

---

[17] «Ագաթանգեղայ Պատմութիւն», Ս. Ղազար, Վենետիկ, 1862, էջ 45-49:

[18] **К. Леви-Строс**, նշվ. աշխ., էջ 227:

[19] Անդ, էջ 227-228:

[20] Տես **Ա. Մնացականյան**, Հայկական զարդարվեստ, Երեւան, 1955, էջ 267-269. նաեւ՝ **Բենսն**, Բուլանըխ, «Ազգագրական հանդէս», հ. Ե., Թիֆլիս, 1899, թ. 1, էջ 102:

[21] «Հայ ժողովրդական հեքիաթներ» (այսուհետ՝ ՀԺՀ), հ. II, Երեւան, 1959, Վաղարշապատ:

որսորդ: Նա իր որսի մի մասը աղ է դնում եւ պահում նկուղում: Մի տարի սով է լինում, աղվեսը գալիս, գտնում է միսը եւ գողանում: Տղան բռնում է նրան գողության պահին, բայց աղվեսը համոզում է չսպանել իրեն՝ խոստանալով օգտակար լինել: Հետո հերթով գալիս են Գելը, Արջը, Զմրուխտ-ղուշը, աղվեսը կերակրում է նրանց, ապա համոզում տղային՝ պահել այդ երեքին: Յոթ տարի հետո սովը վերջանում է. աղվեսը որոշում է ամուսնացնել թագավորի տղային Տրապիզոնի թագավորի աղջկա հետ: Կենդանիները Տրապիզոնում գութանով վար են անում եւ հորովել երգում: Երբ մարդիկ դուրս են գալիս «հրաշքը» տեսնելու, Զմրուխտ-ղուշը փախցնում է աղջկան եւ բերում տղայի մոտ: Աղվեսի հրամանով կենդանիները փախցնում, բերում են նաեւ «տերտերին», որը պսակում է երիտասարդներին: Այսպիսով՝ սյուժետային գրեթե ողջ հանգույցը կառուցվում է գողության եւ հարսանիքի շուրջ:

Հին հայկական ձեռագրերում եւս աղվեսի վերաբերյալ հետաքրքիր հիշատակություններ կան: Աղվեսը առնչվում է աճի եւ պտղաբերության հետ: Ի լրումն՝ նա հաճախ փոխակերպվում է գեղեցիկ աղջկա, մինչեւ սեռափոխությունը բնորոշ է տրիքստերին: Այս հանգամանքները Ա. Մնացականյանին թույլ են տալիս եզրակացնել, որ աղվեսը եղել է հայերի նախնի-տոտեմներից մեկը[22]: Դերսիմցիները եւս հավատում էին, որ աղվեսը դառնում է նոր հարս կամ դեռատի աղջիկ, երբեմն՝ հովիվ, փեսա եւ այլն: Դերսիմում հայերի եւ զազաների կողմից պաշտվում էին սրբազան աղվեսները, որոնք ապրում էին Ս. Հովհաննու փոքր մատուռի ժայռի ստորոտում՝ Աղվեսաբուն կոչված անցքում. նրանց սպանելը խստիվ արգելված էր[23]:

Աղվես-տրիքստերի առնչությամբ հետաքրքիր է «Ոսկե քաքուլ տղի հեքիաթը»[24]: Հերոսը երեք անգամ թույլ չի տալիս իր ընկեր Արաբին՝ սպանել Աղվեսին: Այդ բարության դիմաց Աղվեսն օգնում է տղային

---

[22] **Ա. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 264: Աղվեսի որոշակի պաշտամունք եղել է հայկական լեռնաշխարհում եւ կից տարածքներում: Սվանների պտղաբերության աստվածությունն է Տոլեպիա Մելիան, որի անվան երկրորդ բաղադրիչը նշանակում է «աղվես». **Ш. Амиранашвили**, История грузинского искусства, т. 1, Москва, 1950, էջ 32: Համարվում է, որ Տոլեպիա Մելիան խեթասուրարական Տելեպինուս աստվածության պաշտամունքի մնացուկ է: Թռեղքյան մշակույթի մի գավաթի վրա ներկայացված է պտղաբերության հանդեսի խմբային տեսարան, որտեղ մարդիկ աղվեսի մորթիներով են (**Ш. Амиранашвили**, նշվ. աշխ., էջ 29-35, табл. 11), հեղինակը այն զուգահեռում է Դիոնիսի տոնի հետ՝ աղվեսի մորթի հագած մասնակիցներով:

[23] **Գ. Հալաջյան**, Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», հ. 5, Երեւան, 1973, էջ 163:

[24] ՀԺՀ, Այրարատ, հ. 1, Երեւան, 1950:

փնտրել «Հրաշալի ղուշին» եւ Պողոս ու Պետրոս քարացած եղբայրներին: Աղվեսի խորհրդով՝ տղան կտրում է աղջկա հյուսը եւ բերում աղվեսին: Վարսերը դնելով՝ աղվեսը դառնում է աղջիկ՝ ճիշտ վարսերի տիրուհու նման: Աղվեսը քանիցս փոխում է իր կերպարանքը՝ օգնելով լուծել այս կամ այն խնդիրը:

Մարդիկ գնահատել են աղվեսի խելքն ու խորամանկությունը, ցանկացել նմանվել նրան. «Մարդիկ զխոհեմ եւ զհնարիմաց մարդն աղուէսու նմանեցուցանեն, զի ասեն ընդ խելօք մարդն, թէ իբրեւ զաղուէս ես դու»[25]: Խելոք աղվեսի հանդեպ գորովալից վերաբերմունքի արտահայտություններից են նրան նվիրված ժողովրդական երգերը:

Տրիքստերը հայկական ժողովրդական հեքիաթներում. Տրիքստերը բազմաթիվ կերպարներով է հանդես գալիս մի շարք ժողովուրդների հեքիաթներում՝ մարդ, կենդանի կամ գերբնական էակ՝ Կոշկավոր կատու, Աղվես, զանազան գաճաճներ եւ թզուկներ, հնարամիտ, «հունարով» գողեր եւ այլն: Հայկական հեքիաթներում եւ զվարճապատումներում տրիքստերը հաճախ հանդես է գալիս «Քաչլիկ» կամ «Քյոսա» անվան տակ կամ որպես հնարամիտ գող:

Հնարամիտ գողը կարողանում է թռցնել ամենաանհավանական, ամենագաղտնի պահված իրերը: «Իսաֆով գողը» հեքիաթում[26] գողի եղբորորդին երազում տեսնում եւ սիրահարվում է Զին ու Մաչինի արքայադստերը: Հարսնացուին գողանում է Ջհուդը: Իսաֆով գողը գողանում է սնունդ՝ քաղցած եղբորորդուն կերակրելու համար, դրամ՝ աղքատ պառավին օգնելու համար, հետո հարսնացուին՝ գող Ջհուդից. նա նաեւ առեւտուր է անում ու հասույթի կեսը բաժանում չքավորներին: Այստեղ առկա է անշահախնդրության մոտիվը. գողն իր ազնիվ կամ անազնիվ վաստակը կիսում է աղքատների հետ, այսինքն՝ ակնառու է տրիքստերի երկակիությունը՝ գող եւ բարերար միաժամանակ: Տղայի քաղցը խորհրդանշական է եւ համապատասխանում է հարսնացուից զրկվելուն, այսու գողը նրան բերում է ինչպես սնունդ, այնպես եւ հարսնացուին[27], երկուսն էլ՝ գողությամբ:

«Գող տղի հեքիաթում»[28] Ջհուդի տղան խաբում է գողին, եւ վերջինս վրեժխնդիր է լինում նրանից. խաբեությամբ տիրանում է Ջհուդի

---

[25] **Ա. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 269. մեջբերումը՝ ձեռագիր թիվ 2379, թ. 83ա:

[26] ՀԺՀ, Խլաթ, հ. XVI, Երեւան, 2009:

[27] Համմտ. սննդի եւ սեռականության նույնությունը *լիբիդոյի* տեսակետից. **К. Г. Юнг**, Либидо, его метаморфозы и символы, Санкт-Петербург, 1994, էջ 141:

[28] ՀԺՀ, Լոռի, հ. VIII, Երեւան, 1976:

տղայի ոսկե սինուն, երեք հազար ոսկուն, «մտնում է Ջհուդի աղջկա ծոցը»՝ ամեն անգամ սպառնալով: Վերջապես Ջհուդի տղայի եւ թագավորի աղջկա հարսանիքի ժամանակ նա հագնում է հարսի ընկերուհու զգեստը եւ խաբեությամբ կախաղան հանել է տալիս տղային: Այս ամենից հետո Ջհուդը հեռանում է քաղաքից. երբ պետք է անցներ ծովը, գողը հափշտակում է նրա ողջ կարողությունը, որի հետեւանքով Ջհուդը մահանում է:

Հեքիաթի երկրորդ մասում հարեւան թագավորը կշտամբում է գողի քաղաքի թագավորին, որ վերջինս չի կարողանում գողին բռնել: Գողը, հագնելով աղջկա զգեստ, խայտառակ է անում հարեւան թագավորին: Երկու թագավորները համաձայնում են գողին ամուսնացնել արքայադստեր հետ, որին արդեն առեւանգել էին տարաբախտ Ջհուդի որդուց: Այսպես՝ երկու անգամ առկա է սեռափոխություն, եւ գողությունն ու հարսանիքը սերտորեն փոխկապակցված են. երկրորդ մասը կարելի է դիտարկել որպես հարսանեկան փորձություն:

Տրիքստերը հայկական զվարճապատումներում. Տրիքստերը ժողովրդական բազմաթիվ զրույցների, անեկդոտների սիրելի հերոսն է:

Հայոց մեջ տարածված են եղել արեւելյան զվարճապատումներ այնպիսի հերոսների մասին, ինչպիսիք են Դիվանա Բահլուլը կամ Խոջա Նասրեդդինը: Խ. Աբովյանն իր «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուում զետեղել է նաեւ Մոլլա Նասրեդդինի մասին հայկական զրույցները[29]:

Շատ դեպքերում տրիքստեր-կերպարները իրական մարդիկ են: Գրեթե ամեն գավառ ուներ իր տրիքստեր-հերոսը. Ղարաբաղում Պըլը-Պուղին է, Լոռիում՝ երբեմն «շաշ», բայց եւ խաբող ու խաբվող Հոբոսը[30], կատակասեր Ռուբենը, Շիրակում՝ հնարամիտ Պոլոզ Մուկուչը[31], Արեւմտյան Հայաստանում՝ Խելոք Դավիթը, որոնց մասին զրույցները եւ անեկդոտներն ունեն նույն կառուցվածքը, ինչը որ՝ օտար ազգերի տրիքստերների մասին սյուժեները: Այս բոլոր կերպարներում միավորվում են ծայրահեղ հակասությունները՝ խելքն ու հիմարությունը, դաժանությունը եւ մարդասիրությունը:

Երզնկայում, Դերջանում, Կամախում եւ ավելի հեռավոր վայրերում շատ սիրված էր Քել օղլանը: Նրան Քել էին անվանում ճաղատության պատճառով: Նա խորամանկ էր, խաբեբա, շատ խելացի, դաժան կատակ-

---

[29] **Ա. Սարգսյան**, Լոռու երգիծական մանրապատումները, «Հայ ժողովրդական մշակույթ XV», Երեւան, 2010, էջ 507:

[30] **Ա. Ղանալանյան**, նշվ. աշխ., էջ ԻԱ.:

[31] **Հ. Իկիլիկյան**, Գյումրին, Պոլոզ Մուկուչը եւ երգիծական մանրապատումները, Երեւան, 1969, էջ ԻԱ.:

ներ էր խաղում մոլլայի, թուրք աղայի հետ, նույնիսկ «թագավոր» է անվանվում[32]*:*

Քաչլիկը հայկական ժողովրդական բազմաթիվ հեքիաթների հերոս է: Որոշ հեքիաթներում տրվում է նրա նկարագիրը՝ ճաղատ, կարճահասակ, թխամորթ, անշնորհք տղա, փնթի, երեսը կեղտոտ, քիթը կախ ընկած: Երբեմն նա հանդես է գալիս որպես բացասական կերպար՝ խանգարում է հերոսին: Ավելի տարածված է, սակայն, Քաչլիկի խորամանկ, խաղասեր, հաղթանակող կերպարը:

«Զար Քոսեն» հեքիաթում[33] *տրիքստեր-հերոսը չար ու դաժան կատակներ է անում Գելի, Ռեսի տղայի հետ, խաբում հարսին ու փեսային, խաբելով՝ խմում քրդի գինին, հետո ծեծել տալիս նրան: Ռեսի տղան իր կորցրած երկու հարյուր ոչխարի փոխարեն սպառնում է տանել Քոսի կնոջը: Քոսեն հագնում է կնոջ զգեստները եւ նստում ճախարակ մանելու. երբ Ռեսի տղան կնոջ փոխարեն նրան է տանում, վերջինս գիշերը փախչում է:*

Քոսայի ծիսական զուգահեռն է Բայազետի Ս. Սարգսի տոնի խեղկատակ Քոսա կելինը: Նա այծի մորուքով, ցնցոտիներով, մրոտ երեսով մարդուկ էր՝ ձեռքին խաղք (շխկշխկան խաղալիք), եւ ծամածռություններով գնում էր դռնեդուռ: Ամեն դռան առջեւ նրա շքախմբի դիմակավոր հարսները պարում էին, իսկ նա հավաքում էր նվիրատվությունները. դա պարտադիր էր բոլոր տների համար[34]*:*

Տրիքստերը հայ գրականության մեջ. Հայ գրականության մեջ տրիքստերի կերպարը թույլ է արտահայտված: Հ. Պարոնյանի որոշ հերոսներ ունեն տրիքստերի հատկություններ: Որոշակի վերապահումով՝ տրիքստեր է Գ. Սունդուկյանի «Պեպո» պիեսի հերոս Կակուլին: Վառ արտահայտված տրիքստեր է Գ. Զոհրապի հերոս գող Զաբուղոն: Նրա մեծագույն արժանիքը ճարպկությունն է: Ամեն բան գիտի, բոլոր դռները կարող է բացել, ոչ մի արգելք գոյություն չունի նրա համար: Նրան դավաճանում եւ բռնել է տալիս (տրիքստերի զոհաբերություն) իր սիրելին՝ Վասիլիկը: Զաբուղոն վեցերորդ փորձից կարողանում է փախչել բանտից, սակայն վերջին պահին չի կարողանում սպանել սիրահարներին՝ Վասիլիկին ու նրա սիրեցյալին, եւ ինքնակամ վերադառնում է բանտ:

---

[32] **Գ. Ստեփանյան**, Երգնկա, Երեւան, 2005, էջ 450: Հեղինակը գրի է առել Քելի մասին երկու հեքիաթ՝ «Քել օղլանն ու մոլլան», «Քել օղլանն ու թուրք աղան», իսկ մեկ այլ հեքիաթ, որը ներկայացված չէ, կոչվում է «Քել օղլանը թագավոր»:

[33] ՀԺՀ, Բուլանըխ-Խլաթ, հ. XVI, Երեւան, 2009:

[34] **Վ. վրդ. Տէր-Մինասեան**, նշվ. աշխ., էջ 54:

Եզրակացնելով այս հակիրճ ակնարկը՝ նշենք, որ տրիքստերը հայկական տոնածիսական համակարգի կարեւոր կերպարներից է, բավականին հաճախ ի հայտ է գալիս հայկական առասպելաբանության մեջ, հեքիաթներում, զվարճապատումներում, ավելի քիչ՝ գրականության մեջ: Որպես միջնորդ տրիքստերն ապահովում է տարատեսակ «աշխարհների» ներդաշնակ կապը:

РЕЗЮМЕ

В армянской культуре архетип трикстера воплощается в Ваагне и в воре сена Трдате, в свадебном и сказочном лисе, в ловком воре и в других героях - мошенниках и умницах. Наиболее целостно трикстер проявляется в карнавальных шутах - героях сказок и обрядов, таких как Хан-Паша, Кеса-Качлик (плешивый), кошик (козел), вор Лис. Армянские трикстеры в большинстве связаны так же со свадебным обрядом, что является их этнической особенностью. Это медиаторы между жизнью и смертью, между двумя разными мирами, которые они соединяют в целостно-диалектический цикл.

SUMMARY

The trickster archetype is incorporated into the Armenian culture in such personages as Vahagn and the king Tiridates as straw stealer, as matrimonial and fairy-tale Fox, sophisticated thief and other deceiver, swindler and smart heroes. The most important figures of the trickster can be met in the carnival: jester-like heroes as Pasha (the Carnival King), Kyosa-Kachlik (bald), koshik-goat, the thief-Fox. Armenian tricksters mostly are connected with the matrimonial ceremony, and that is their ethnic peculiarity. They are mediums between the life and death, two different worlds, which they connect to each other in a dialectical circle.